ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 2

«21» 01 2020 թ. գ. Երևան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-Ն 277-Ն օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 12-րդ կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N 79-Ն որոշումով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների» N 2 աղյուսակի 1013 ծրագրային դասիչով «Փորձաքննության ծառայությունների տրամադրում» 11001 միջոցառման դասիչով Հայաստանի Հանրապետության դատախազությանը հատկացված միջոցների հաշվին պետական մարմինների կողմից իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ դատական փորձաքննությունների իրականացման ծառայությունները ձեռք բերել Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարաններից (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմիններից ստացված համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշումների հիման վրա:

2. Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը 2020 թվականի համար սահմանված է 560 դրամ:

3. Հաստատել փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի նախահաշվային արժեքը և ձեռքբերման ենթակա քանակն ըստ փորձաքննությունների տեսակների՝ համաձայն հավելվածի (կցվում է):

4. 2020 թվականի ընթացքում տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում, անհրաժեշտության դեպքում, փոփոխել սույն հրամանի հավելվածով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով նախատեսվածին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-օրյա ժամկետում այն հրապարակել Հայաստանի Հանրապետության դատախազության պաշտոնական կայքէջում:

6. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

7. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի 2020 թվականի
հունվարի 21-ի N 2 հրամանի

2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Փորձաքննության տեսակի անվանումը	Միավորի նախահաշվային արժեքը /դրամ/	Քանակը /հատ/	Ընդամենը նախահաշվային արժեքը /հազ.դրամ/
Ձեռագրաբանական	25200	554	13960.8
Հեղինակային (ներառյալ մտավոր սեփականության)	25200	4	100.8
Փաստաթղթաբանական	33600	806	27081.6
Ֆոտոտեխնիկական	50400	20	1008.0
Դիմանկարային	50400	25	1260.0
Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	220	14784.0
Հետքաբանական	25200	550	13860.0
Ձգաբանական	33600	276	9273.6
Պայթյունատեխնիկական	50400	85	4284.0
Նյութագիտական	33600	1321	44385.6
Սննդային	33600	88	2956.8
Կենսաբանական/հողագիտական	33600	800	26880.0
Հրդեհատեխնիկական	50400	298	15019.2
Շինարարատեխնիկական	33600	303	10180.8
ՃՏՊ հանգամանքների	16800	240	4032.0
ՏՄ տեխնիկական վիճակի	50400	50	2520.0
Տրանսպորտային հետքաբանական	50400	100	5040.0
Տնտեսագիտական	100800	78	7862.4
Ապրանքագիտական	16800	1210	20328.0
Համակարգչատեխնիկական	84000	415	34860.0
Մշակութային արժեքների	67200	93	6249.6
Հոգեբանական	85680	128	10967.0
Դատաբժշկական	69440	454	31525.8
Դատաքիմիական (թունաբանական)	11760	995	11701.2
Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման)	145600	2	291.2
Օդորոլոգիական (այդ թվում՝ մարդու կողմից թողնված հոտային հետքերի)	33600	2	67.2
Ճարտարագիտատեխնիկական	84000	148	12432.0
Լինգվիստիկական	85680	16	1370.9
Էկոլոգիական	33600	30	1008.0
Ընդամենը		9311	335290.6